«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի 11.06.2024թ. թիվ 485Ն/Մ հրամանի

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 3 25.03.2021թ.
Փոփոխվել է՝
Արձանագրություն թիվ 15 11.06.2024թ.
Առ 11.06.2024թ. փոփոխություններով

Վանաձոր

2024թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրինակելի կանոնադրությունը սահմանում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) Ֆակուլտետի (այսուհետ՝ Ֆակուլտետ) գործունեության իրավական հիմքերը:

2. Սույն օրինակելի կանոնադրության ընդունման իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, Համալսարանի կանոնադրությունը և ներքին իրավական ակտերը:

3. Յուրաքանչյուր Ֆակուլտետ սույն օրինակելի կանոնադրության հիման վրա մշակում և Ֆակուլտետի գիտական խորհրդում ընդունում է իր կանոնադրությունը, որը հաստատում է Համալսարանի գիտական խորհուրդը:

4. Ֆակուլտետի կանոնադրության և Ֆակուլտետի օրինակելի կանոնադրության դրույթների միջև հակասություն առաջանալու դեպքում գործում են օրինակելի կանոնադրության դրույթները:

5. Ֆակուլտետը Համալսարանի գիտական խորհրդի առաջարկությամբ ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

6. Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝

հայերեն՝ ՎՊՀ բնական գիտությունների ֆակուլտետ,

ռուսերեն՝ Факультет естественных наук ВГУ,

անգլերեն՝ Faculty of Natural Sciences, VSU:

7. Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36:

8. Ֆակուլտետը Համալսարանի գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանում է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն՝ մեկ կամ մի քանի մասնագիտություններով, իր կանոնադրությանը համապատասխան օժտված է իրավունքներով և կրում է պարտականություններ:

9. Ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ, իր

կանոնադրությամբ, ինչպես նաև Համալսարանի կառավարման մարմինների, Ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության սահմաններում ընդունած իրավական ակտերով:

10. Ֆակուլտետն ունի կնիք (միայն հայերենով), սահմանված կարգի պաշտոնական ձևաթուղթ, խորհրդանիշ: Կարող է ունենալ անհատականացման այլ միջոցներ:

11. Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, կենտրոններից, լաբորատորիաներից, ինչպես նաև ուսումնական, գիտական և օժանդակ այլ ստորաբաժանումներից:

II. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

12. Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և Ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ:

13. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են Ֆակուլտետի գիտական խորհուրդը, դեկանատի խորհուրդը և դեկանը:

14. Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը Ֆակուլտետի գիտական խորհուրդն է (այսուհետ նաև՝ Գիտխորհուրդ), որի նախագահը տվյալ Ֆակուլտետի դեկանն է ի պաշտոնե:

15. Գիտխորհուրդը կազմված է ի պաշտոնե և ընտրովի անդամներից:
16. Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների թիվը 20 է:

17. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են տվյալ Ֆակուլտետի դեկանը, ամբիոնների վարիչները, Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահը:

Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են, որի կեսը սովորողներն են: Գիտխորհրդի ընտրովի անդամների (բացի սովորողներից) թեկնածությունները համամասնորեն առաջադրում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները: Նրանց թիվը հաշվարկվում է ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվաքանակի համամասնության: Ընտրովի անդամների համալրումն իրականացվում է յուրաքանչյուր ստորաբաժանումից հավասար թվով ներկայացուցիչներ ընդգրկելու սկզբունքով: Ընտրովի անդամների մյուս մասի համալրումն իրականացվում է համամասնորեն՝ նախապատվությունը տալով առավել թվով հաստիքակազմ ունեցող ստորաբաժանումներին:

18. Գիտական խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել միայն տվյալ Ֆակուլտետի հիմնական կամ ներքին համատեղությամբ աշխատող պրոֆեսորներ, դոցենտներ, ավագ դասախոսներ, դասախոսներ, ասիստենտներ:
(18-րդ կետը փոփոխվել է 11.06.2024թ. Հրաման թիվ 485 Ն/Մ)

19. Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրումը և ընտրությունն իրականացնում է Ֆակուլտետի ուսանողական խորհուրդը: Ֆակուլտետի ՈւԳԸ-ի նախագահը հաշվառվում է ուսանողների կազմում՝ առանց ընտրության:

20. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմը և դրանում փոփոխությունների կատարումը Ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ հաստատվում է Համալսարանի ռեկտորի հրամանով:

Ֆակուլտետի գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

21. Ֆակուլտետի գիտական խորհուրդը՝

1) Ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա ընդունում է Ֆակուլտետի կանոնադրությունը և ներկայացնում Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը.

2) Համալսարանի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ Ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու, վերակազմավորելու վերաբերյալ.

3) ընդունում է որոշումներ Ֆակուլտետի կրթական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ հարցերի վերաբերյալ և հսկում դրանց կատարումը.

4.1) իրականացնում է Ֆակուլտետի դեկանի ընտրությունը և պաշտոնանկությունը.
4.2) իրականացնում է ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի 4 տարակարգերի (դոցենտներ, ավագ դասախոսներ, դասախոսներ, ասիստենտներ) մրցութային ընտրությունը.
4.3) ընտրում է ֆակուլտետի գիտական խորհրդին կից պրոֆեսորադասախոսական պաշտոնների տեղակալման մրցույթի մասնակիցների փաստաթղթերի ստուգման և եզրակացությունների տրամադրման մշտական հանձնաժողով հետևյալ կազմով.

- Ֆակուլտետի յուրաքանչյուր ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմից մեկական ներկայացուցիչ՝ ամբիոնի նիստով հաստատված,
- Ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղար,
- Ֆակուլտետի ուսանողական խորհրդից մեկ ներկայացուցիչ:

Հանձնաժողովի կազմը հաստատվում է ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում, բաց քվեարկությամբ՝ հինգ տարի ժամկետով: Հանձնաժողովի կազմն ամրագրվում է ռեկտորի հրամանով:
(21.4 կետը փոփոխվել է 11.06.2024թ. Հրաման թիվ 485 Ն/Մ)

5) լսում է Ֆակուլտետի դեկանի ամենամյա հաշվետվությունը և գնահատում նրա գործունեությունը.

6) Համալսարանի հոգաբարձուների խորհրդում, Համալսարանի գիտական խորհրդում առաջադրում է Ֆակուլտետի ներկայացուցիչների թեկնածուներին.

7) Համալսարանի գիտական խորհրդում հաստատելու նպատակով Համալսարանի ռեկտորին է ներկայացնում Ֆակուլտետի ուսումնական պլանները.

8) լուծում է սույն օրինակելի կանոնադրությունից և Համալսարանի այլ ներքին իրավական ակտերից բխող, Ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

22. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ:

23. Գիտխորհրդի նիստն իրավազոր է Գիտխորհրդի անդամների ցուցակային կազմի երկու երրորդի ներկայության դեպքում:

24. Քվեակազմի (քվորումի) բացակայության դեպքում հայտարարվում է Գիտխորհրդի նիստի անցկացման նոր ժամանակը՝ նույն օրակարգով:

25. Ֆակուլտետի գիտական խորհրդում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն օրինակելի կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

26. Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումները պարտադիր են Ֆակուլտետի աշխատողների և սովորողների համար:

27. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Գիտխորհրդի նախագահը՝ տվյալ Ֆակուլտետի դեկանը:

28. Գիտխորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել ռեկտորը և/կամ պրոռեկտոր(ներ)ը:

29. Ֆակուլտետի գիտական խորհրդի՝ Դեկանի ընտրության օրակարգով բաց նիստը վարում է դեկանը, իսկ դեկանի ընտրության համար ներկայացված թեկնածուների թվում պաշտոնավարող դեկանի թեկնածության առկայության դեպքում՝ Ֆակուլտետի գիտական խորհրդի տարիքով ավագ անդամը:

30. Դեկանի պաշտոնանկության հարցը քննարկելու նպատակով հրավիրված նիստը վարում է ռեկտորը:

31. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի նախագահողը բացում և փակում է նիստը, առաջարկում է նիստի աշխատակարգը, ապահովում է դրա կատարումը, քվեարկության է դնում օրակարգի հարցերը և անհրաժեշտության դեպքում կազմակերպում է հաշվիչ հանձնաժողովի ընտրությունը:

32. Ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարն ընտրվում է ֆակուլտետի անդամների կազմից:

33. Դեկանի կողմից նիստը հրավիրելու անհնարինության դեպքում Գիտխորհրդի նիստը հրավիրվում է դեկանի պաշտոնակատարի կամ ռեկտորի կողմից:

34. Գիտական խորհրդում դեկանի ընտրության և պաշտոնանկության, ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի 4 տարակարգերի (դոցենտներ, ավագ դասախոսներ, դասախոսներ, ասիստենտներ) մրցութային ընտրության քվեարկությունը փակ, գաղտնի է:
(34 կետը փոփոխվել է 11.06.2024թ. Հրաման թիվ 485 Ն/Մ)

35. Ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից դեկանի ամենամյա հաշվետվությունը լսելու նիստում Գիտխորհուրդը քվեարկությամբ գնահատում է դեկանի գործունեությունը: Դեկանի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում ռեկտորը մեկ շաբաթվա ընթացքում հրավիրում է Ֆակուլտետի գիտական խորհրդի արտահերթ նիստ՝ դեկանին անվստահություն հայտնելու հարցի քննարկման և որոշում ընդունելու համար:

36. Դեկանին անվստահություն հայտնելու Գիտխորհրդի նիստի ընթացքում ընթացակարգային խախտումներ հայտնաբերելու դեպքում ռեկտորը հնգօրյա ժամկետում՝ մինչև դեկանի պաշտոնանկության նպատակով հրավիրված նիստը, Ֆակուլտետի գիտական խորհրդում նշանակում է նոր քվեարկություն:

37. Դեկանին պաշտոնանկ անելու մասին որոշումն ընդունվելու դեպքում ռեկտորը հնգօրյա ժամկետում լուծում է դեկանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

38. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, ելույթների հակիրճ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, որոնք պատասխանատու են արձանագրությունը ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են Համալսարանի ռեկտորին՝ Համալսարանի ինտերնետային կայքում հրապարակելու նպատակով:

39. Ֆակուլտետի դեկանատի խորհուրդը դեկանին կից խորհրդակցական մարմին է, որը Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում քննարկում է Ֆակուլտետի գործունեության ոլորտներին վերաբերող հարցեր:

Դեկանատի խորհրդի անդամները ֆակուլտետի խորհրդում ի պաշտոնե ընդգրկված անդամներ են՝ դեկանը, դեկանի տեղակալը, ամբիոնների վարիչները, ՈՒԳԸ նախագահը, որի կազմը հաստատում է Համալսարանի ռեկտորը:

40. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է դեկանը՝ իր իրավասությունների սահմաններում, Համալսարանի և Ֆակուլտետի կանոնադրություններին համապատասխան:

41. Դեկանը կարող է ունենալ տեղակալ, որի թեկնածությունը ներկայացնում է Համալսարանի ռեկտորին՝ հրամանագրման:

42. Դեկանն ընտրվում և պաշտոնանկ է արվում Ֆակուլտետի գիտական խորհրդում՝ Ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգին համաձայն:

43. Ֆակուլտետի դեկանը՝

1) կազմակերպում և ղեկավարում է Ֆակուլտետի կրթական, գիտական, միջազգային և այլ գործունեությունը.

2) ապահովում է Համալսարանի մարմինների և Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումների կատարումը.

3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալի թեկնածություն(ներ)ը.

4) Համալսարանի ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում Ֆակուլտետի ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, նույն կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, տեղափոխման, ուսուցման ձևի փոփոխման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու, պրակտիկաների անցկացման և այլ հարցերի վերաբերյալ,

5) կազմակերպում է ուսումնական դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց կատարումը Ֆակուլտետում,

6) վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման գործընթացը Ֆակուլտետում ,

7) իր լիազորությունների շրջանակում խրախուսում, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության է ենթարկում Ֆակուլտետի ուսանողներին,

8) լուծում է Ֆակուլտետի կանոնադրությունից բխող և Ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

9) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի և Ֆակուլտետի կանոնադրություններով նախատեսված այլ լիազորություններ:

44. Դեկանն արձակում է հրահանգներ և կարգադրություններ, որոնց կատարումը պարտադիր է Ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների, աշխատողների և սովորողների համար:

III. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

45. Ֆակուլտետի հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են ամբիոնները: Ֆակուլտետում կարող են գործել նաև լաբորատորիաներ, կենտրոններ և գիտակրթական ու այլ ստորաբաժանումներ:

46. Ամբիոնները Ֆակուլտետի գիտակրթական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են:

47. Ամբիոնն ապահովում է ուսումնական գործընթացը, իրականացնում է մեթոդական և գիտական հետազոտություններ:

48. Ամբիոնները գործում են Համալսարանի կանոնադրության և այլ իրավական ակտերի, Ֆակուլտետի կանոնադրության հիման վրա:

49. Ամբիոնի վարիչը կազմակերպում և վերահսկում է ամբիոնի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքները, ներկայացնում է ամբիոնը Ֆակուլտետի, Համալսարանի, համալսարանական ստորաբաժանումների, ինչպես նաև արտահամալսարանական կազմակերպությունների հետ հարաբերություններում:

50. Ամբիոնի վարիչը մրցութային հիմունքներով ընտրվում է Համալսարանի գիտական խորհրդում՝ ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգին համաձայն:

51. Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնի գործունեության համար: Ամբիոնի վարիչն ըստ սահմանված կարգի տարին մեկ անգամ հաշվետվություն է տալիս Ֆակուլտետի գիտական խորհրդում:

52. Ամբիոնի աշխատանքների մասին ամբիոնի վարիչի հաշվետվությունների ժամկետները և ձևերը սահմանում է Համալսարանի գիտական խորհուրդը:

53. Ֆակուլտետի կենտրոնները և լաբորատորիաները Ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնց ստեղծման և գործունեության կարգը, ինչպես նաև իրավասությունը սահմանվում է Ֆակուլտետի կանոնադրությամբ:

54. Կենտրոնի կամ լաբորատորիայի գործունեության հիմնական հարցերը քննարկվում են կենտրոնի կամ լաբորատորիայի համակազմի նիստերում:

55. Ամբիոնների, կենտրոնների և լաբորատորիաների ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումն ընդունում է Համալսարանի հոգաբարձուների խորհուրդը՝ Ֆակուլտետի գիտական խորհրդի առաջարկությամբև Համալսարանի ռեկտորի ներկայացմամբ:

56. Ֆակուլտետի կանոնադրության հավելվածի տեսքով ներկայացվում են տվյալ Ֆակուլտետի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները:

Հավելված

ՎՊՀ բնական գիտությունների

ֆակուլտետի կանոնադրության

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի բնական գիտությունների ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները

1. Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն,
2. Քիմիայի և կենսաբանության ամբիոն: